Հաստատված է
«Հայաստանի պետական տնտեսագիտական
համալսարան» պետական ոչ առևտրային
կազմակերպության ռեկտորատի 2022 թվականի
սեպտեմբերի 6-ի N 3 - 1 որոշմամբ,
ռեկտոր
_____ Դ. Գալոյան
6 սեպտեմբերի 2022 թ.

ԱՇԽԱՏԱԿԱՐԳ
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՌԵԿՏՈՐԱՏԻ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության (այսուհետ՝ համալսարան) ռեկտորատը ռեկտորին կից խորհրդակցական մարմին է: Այն համալսարանի գիտական խորհրդի նիստերի միջև ընկած ժամանակահատվածում, սույն աշխատակարգով իրեն վերապահված լիազորությունների սահմաններում, քննարկում է համալսարանի ընթացիկ գործունեությանը և համալսարանի գիտական խորհրդի որոշումների կատարման ընթացքին վերաբերող հարցերը:

2. Ռեկտորատը կայացնում է որոշումներ, որոնց վերաբերյալ համալսարանի ռեկտորը կարող է ընդունել հրամաններ:

2. ՌԵԿՏՈՐԱՏԻ ԿԱԶՄԸ

3. Համալսարանի ռեկտորատի կազմը հաստատում է ռեկտորը:

4. Ռեկտորատի կազմի մեջ են մտնում ռեկտորը, պրոռեկտորները, դեպարտամենտների տնօրենները, մասնաճյուղերի տնօրենները, գիտական քարտուղարը, արհեստակցական կազմակերպության նախագահը, կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարներ:

5. Ռեկտորի հրավերով ռեկտորատի նիստերին կարող են խորհրդակցական ձայնի իրավունքով մասնակցել այլ աշխատողներ և մասնագետներ:

3. ՌԵԿՏՈՐԱՏԻ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆԸ

6. Ռեկտորատը իր լիազորությունների շրջանակում քննարկում է.

1) համալսարանի կրթական, գիտական, ուսումնադաստիարակչական աշխատանքների կազմակերպման ու իրականացման հարցեր.

2) սովորողների ընթացիկ և կիսամյակային քննությունների, վերահանձնումների կազմակերպմանը և անցկացմանը, հաճախումներին, վերականգնմանը, տեղափոխմանը, շարժունությանը, վարձավճարների զեղչմանն առնչվող հարցեր,

3) համալսարանի աշխատողների և ուսանողների խրախուսման, ինչպես նաև կարգապահական պատասխանատվության միջոցների կիրառման հարցեր,

4) գիտական խորհրդի որոշումների կատարման ընթացքին վերաբերող հարցեր.

5) մանդատային հանձնաժողովի կողմից կայացրած որոշումների քննարկում և հաստատում.

6) համալսարանի գործունեության վերաբերյալ և ռեկտորի ներկայացմամբ այլ հարցեր:

4. ՌԵԿՏՈՐԱՏԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

7. Ռեկտորատի նիստերը հրավիրվում են ռեկտորի կողմից՝ ըստ անհրաժեշտության, ռեկտորի կողմից սահմանված օրակարգով:

8. Գիտական քարտուղարը ռեկտորատի անդամներին ծանուցում է նիստի կայացման ժամի և օրակարգի մասին:

9. Ռեկտորատի նիստը համարվում է իրավազոր, եթե նիստին մասնակցում է ռեկտորատի անդամների 2/3-ը:

10. Ռեկտորատի նիստերը նախագահում է ռեկտորը:

11. Ռեկտորը ռեկտորատի նիստին հայտարարում է նիստի օրակարգը, սահմանում օրակարգի հարցերի քննարկման հաջորդականությունը:

12. Ռեկտորատի նիստերն արձանագրվում են գիտական քարտուղարի կողմից:

13. Ռեկտորատի նիստերի արձանագրության մեջ նշվում են նիստի անցկացման ամսաթիվը, նիստին ներկա անձանց անվանացանկը, նիստի օրակարգը, օրակարգի հարցերի վերաբերյալ ընդունված որոշումները:

14. Ռեկտորատի նիստերի արձանագրությունները ստորագրում են ռեկտորը և գիտական քարտուղարը:

15. Ռեկտորատում որոշումներն ընդունվում են ձայների պարզ մեծամասնությամբ, բաց քվեարկությամբ և ըստ անհրաժեշտության հրապարակվում են: